ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/48

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Բի սոֆթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Լ. Պետրոսյանի (լիազորագիր՝ տրված 06.07.2021թ.),

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչ

Ն. Գևորգյանի (լիազորագիր՝ տրված 08.07.2021թ.),

քննելով «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար աշխատաժամանակի հաշվարկի կամ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Բի սոֆթ» ՍՊԸ-ի կողմից 01.07.2021թ. ներկայացված (02.07.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/48 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Բի սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բի սոֆթ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 01.07.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից (հասցեն ՀՀ ք. Երևան, Ի. Գասպարյան 33) սույն թվականի հունիսի 24-ին հայտարարվել է ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/21 ծածկագրով մրցույթ՝ «Աշխատաժամանակի հաշվարկի կամ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների» մատուցման պայմանագիր:

ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/21 ծածկագրով մրցույթի պայմանագրի Հավելված N 1-ում ներկայացված Տեխնիկական բնութագրի մեջ Պատվիրատուն նշել է. «1C ԼԻՆԿ: «Աշխատավարձի հաշվարկ և կադրերի կառավարում» մարդկային ռեսուրսների և կադրային հաշվառում ենթահամակարգերի ներդրման ծառայություններ...» սույնով խախտելով ՀՀ գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները, այն է «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ելնելով վերը շարադրվածից, դիմում ենք Ձեզ համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված իրավասությունների շրջանակում պարտավորեցնել Պատվիրատուին չեղյալ հայտարարել ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/21 ծածկագրով մրցույթի ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Նշված գնման ընթացակարգի հետ կապված 1C-ԼԻՆԿ ծրագիրը նշելով պատվիրատուն ցանկացել է տալ ձեռքբերվող ծառայությունների լիարժեք նկարագիր, ելնելով այն հանգամանքից, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ում արդեն իսկ ներդրված է համակարգը և ծրագիրը գործում է և վերջինիս անհրաժեշտ է տվյալ համակարգի ենթահամակարգերի ներդրումը: Ընդամենը պատվիրատուն միտում է ունեցել տալ այնպիսի նկարագիր, որ հնարավորություն տա մասնակիցներին լիարժեք գնահատելու իրենց հնարավորությունները, հասկանա արդյոք կկարողանա կատարել պայմանագիրը»:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կարիքների համար աշխատաժամանակի հաշվարկի կամ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, գնման առարկայի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	գնումների պլանով նախատ. միջ. ծածկ.՝ ըստ ԳՄԱ դասակ. (CPV)	տեխնիկական բնութագիրը
1	72211176/1	**<u>1C-ԼԻՆԿ: <<Աշխատավարձի հաշվարկ և կադրերի կառավարում>> համակարգի մարդկային ռեսուրսների և կադրային հաշվառում ենթահամակարգերի ներդրման ծառայություններ</u>** ***1.Ընդհանուր պահանջներ***

		1.1 Տվյալների փոխանակում այլ ծրագրերի հետ: **1.2** Օգտագործողների համար ինտերֆեյսների և իրավունքների սահմանում: **1.3** Ծրագրի հուսալի պաշտպանություն չարտոնված մուտքերից: **1.4** Տվյալների վերականգնման և արխիվացման հնարավորություն: **1.5** Ներկառուցված նկարագրությունների,հուշումների առկայություն: **1.6** Օգտագործողի կողմից կարգավորումների մատչելիություն: **1.7** Տվյալների արտահանում և ներմուծում: **1.8** Ծրագրի լեզուները հայերեն,ռուսերեն և անգլերեն: ***2.Կատարողը պետք է կատարի Ծրագրի ներդրման հետ կապված հետևյալ ծառայությունները.*** **2.1** Խորհրդատվություններ ծրագրի հետ ընթացիկ աշխատելու վերաբերյալ և ծրագրի տեխնիկական հարցերով աջակցություն: **2.2** Աշխատակիցների ուսուցում: **2.3** Կադրային փաստաթղթաշրջանառության տվյալների բեռնում գործող 1C 7.7 համակարգից դեպի նոր համակարգ: **2.4** Ընկերության գործունեության առանձնահատկությունները հաշվի առնելով ծրագրային փաստաթղթերի ստեղծում և մշակում: **2.5** Ներքին կադրային փաստաթղթաշրջանառության համապատասխանեցում Պատվիրատուի պահանջներին: **2.6** Ենթահամակարգի փորձնական և արտադրական շահագործման ուղեկցում: ***3. Կադրային հաշվառում ենթահամակարգը պետք է պարունակի*** **3.1** Աշխատակիցների ընդունում: **3.2** Աշխատակիցների ազատում: **3.3** Հաստիքացուցակի վարում և վերահսկում: **3.4** Տաբելի ձևավորում: **3.5** Ներքին համատեղության ապահովում: **3.6** Աշխատողների գործուղումների հաշվառում: **3.7** Աշխատողների անձնական քարտի վարում՝ անձնական տվյալներ,ընտանեկան կարգավիճակ, ՕԵԿ կարգավարների որակավորման դասընթացների տվյլաներ(որակավորման սկզբի և ավարտի մասին մանրամասն տվյալներ), ստաժ և այլն: **3.8** Աշխատանքային գրաֆիկներ: **3.9** Աշխատողների տվյալների կառավարում հաշվետվությունների միջոցով: **3.10** Կադրային շարժի հաշվետվություն: **3.11** Կադրային հրամանների տպագրական ձևերի ավտոմատ ձևավորում: **3.12** Տոնական և հիշատակի օրերի սահմանում և փոփոխություն: **3.13** Աշխատողների չօգտագործված արձակուրդային օրերի վերաբերյալ հաշվետվություն: **3.14** Ռեգիստրով կարգավորում յուրաքանչյուր աշխատողի լրացուցիչ հասանելի արձակուրդային օրերի տրամադրման համար: **3.15** Արձակուրդայինների հաշվառում: **3.16** Անաշխատունակության թերթիկների հաշվառում: **3.17** Չվճարվող բացակայություններ: **3.18** Ֆիզ.անձի հետ պայմանագիր: **3.19** Գործող աշխատողների հաշվետվություն: **3.20** Նպաստների հաշվետվություն: **3.21** Օբյեկտների որոնում,ֆիլտրում և տեսակավորում ըստ նշված պարամետրերի: **3.22** Մուտքագրված տվյալների փոփոխման հնարավորություն: ***4. Այլ պահանջներ*** **4.1** Ծրագրի ներդրման ընթացքում այցելել/արձագանքել Պատվիրատուին ըստ կանչի ոչ ուշ, քան կանչը ստանալուց հետո առնվազն 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում և հայտնաբերված պրոբլեմները շտկել ոչ ուշ, քան պրոբլեմը

		հայտնաբերելու պահից առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում: Մասնակիցը պետք է ունենա 1C ծրագրային ապահովման սպասարկման և փոփոխման համապատասխան իրավունքներ (1C ծրագրային ապահովման հեղինակային իրավունք կամ «1C-Ֆրանչայզինգ» կարգավիճակ «1C» ընկերության կողմից):

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Բի սոֆթ» ՍՊԸ-ի 01.07.2021թ. բողոքը, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի ներկայացուցչի հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի

բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: ***<u>Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը</u>***:

Այսպես, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ի կարիքների համար աշխատաժամանակի հաշվարկի կամ մարդկային ռեսուրսների կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, գնման առարկայի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Հ/Հ	գնումների պլանով նախատ. միջ. ծածկ.՝ ըստ ԳՄԱ դասակ. (CPV)	տեխնիկական բնութագիրը
1	72211176/1	**<u>1C-ԼԻՆԿ: <<Աշխատավարձի հաշվարկ և կադրերի կառավարում>> համակարգի մարդկային ռեսուրսների և կադրային հաշվառում ենթահամակարգերի ներդրման ծառայություններ</u>** ***1.Ընդհանուր պահանջներ*** ***1.1*** Տվյալների փոխանակում այլ ծրագրերի հետ: ***1.2*** Օգտագործողների համար ինտերֆեյսների և իրավունքների սահմանում: 1.3 Ծրագրի հուսալի պաշտպանություն չարտոնված մուտքերից: 1.4 Տվյալների վերականգնման և արխիվացման հնարավորություն: 1.5 Ներկառուցված նկարագրությունների,հուշումների առկայություն: 1.6 Օգտագործողի կողմից կարգավորումների մատչելիություն: 1.7 Տվյալների արտահանում և ներմուծում: 1.8 Ծրագրի լեզուները հայերեն,ռուսերեն և անգլերեն: ***2.Կատարողը պետք է կատարի Ծրագրի ներդրման հետ կապված հետևյալ ծառայությունները.*** ***2.1*** Խորհրդատվություններ ծրագրի հետ ընթացիկ աշխատելու վերաբերյալ և ծրագրի տեխնիկական հարցերով աջակցություն: **2.2** Աշխատակիցների ուսուցում: **2.3** Կադրային փաստաթղթաշրջանառության տվյալների բեռնում գործող 1C 7.7 համակարգից դեպի նոր համակարգ: **2.4** Ընկերության գործունեության առանձնահատկությունները հաշվի առնելով ծրագրային փաստաթղթերի ստեղծում և մշակում: **2.5** Ներքին կադրային փաստաթղթաշրջանառության համապատասխանեցում Պատվիրատուի պահանջներին: **2.6** Ենթահամակարգի փորձնական և արտադրական շահագործման ուղեկցում: ***3 Կադրային հաշվառում ենթահամակարգը պետք է պարունակի*** 3.1 Աշխատակիցների ընդունում: 3.2 Աշխատակիցների ազատում: 3.3 Հաստիքացուցակի վարում և վերահսկում: 3.4 Տաբելի ձևավորում: 3.5 Ներքին համատեղության ապահովում: 3.6 Աշխատողների գործուղումների հաշվառում: 3.7 Աշխատողների անձնական քարտի վարում՝ անձնական տվյալներ,ընտանեկան

		կարգավիճակ, ՕԵԿ կարգավարների որակավորման դասընթացների տվյլաներ(որակավորման սկզբի և ավարտի մասին մանրամասն տվյալներ), ստաժ և այլն: 3.8 Աշխատանքային գրաֆիկներ: 3.9 Աշխատողների տվյալների կառավարում հաշվետվությունների միջոցով: 3.10 Կադրային շարժի հաշվետվություն: 3.11 Կադրային հրամանների տպագրական ձևերի ավտոմատ ձևավորում: 3.12 Տոնական և հիշատակի օրերի սահմանում և փոփոխություն: 3.13 Աշխատողների չօգտագործված արձակուրդային օրերի վերաբերյալ հաշվետվություն: 3.14 Ռեգիստրով կարգավորում յուրաքանչյուր աշխատողի լրացուցիչ հասանելի արձակուրդային օրերի տրամադրման համար: 3.15 Արձակուրդայինների հաշվառում: 3.16 Անաշխատունակության թերթիկների հաշվառում: 3.17 Չվճարվող բացակայություններ: 3.18 Ֆիզ.անձի հետ պայմանագիր: 3.19 Գործող աշխատողների հաշվետվություն: 3.20 Նպաստների հաշվետվություն: 3.21 Օբյեկտների որոնում,ֆիլտրում և տեսակավորում ըստ նշված պարամետրերի: 3.22 Մուտքագրված տվյալների փոփոխման հնարավորություն: ***4 Այլ պահանջներ*** 4.1 Ծրագրի ներդրման ընթացքում այցելել/արձագանքել Պատվիրատուին ըստ կանչի ոչ ուշ, քան կանչը ստանալուց հետո առնվազն 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում և հայտնաբերված պրոբլեմները շտկել ոչ ուշ, քան պրոբլեմը հայտնաբերելու պահից առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում: Մասնակիցը պետք է ունենա 1C ծրագրային ապահովման սպասարկման և փոփոխման համապատասխան իրավունքներ (1C ծրագրային ապահովման հեղինակային իրավունք կամ «1C-Ֆրանչայզինգ» կարգավիճակ «1C» ընկերության կողմից):

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Պատվիրատուն Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ձեռք բերվող գնման առարկայի մասով տեխնիկական բնութագիրը սահմանելիս նախատեսել է կոնկրետ «1C» ընկերության կոնկրետ «1C-ԼԻՆԿ: Աշխատավարձ և անձնակազմի կառավարում» ծրագիրը (պրոդուկտ):

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին,

անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները, ընդ որում, տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ըստ այդմ գտնում եմ, որ տվյալ դեպքում «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով նախատեսված գնման առարկայի համար սահմանված տեխնիկական բնութագիրը գնման մրցակցային որևէ ձևի կիրառման պայմաններում կազմված է Օրենքի 13-րդ հոդվածի 5-ին մասով սահմանված պահանջի խախտմամբ, հետևաբար Ընկերության ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերում է բողոքի վերաբերյալ Պատվիրատուի այն դիրքորոշմանը, որ «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ում արդեն իսկ ներդրված է համակարգը և ծրագիրը գործում է և վերջինիս անհրաժեշտ է տվյալ համակարգի ենթահամակարգերի ներդրումը, ապա սույն մասով հարկ եմ համարում ընդգծել հետևյալը.

Համաձայն «ԼԻՆԿ» ընկերության պաշտոնական կայքում /http://link.am/ առկա տեղեկատվության՝ «ԼԻՆԿ» ընկերությունը հանդիսանում է «1C» ընկերության ֆրանչայզի և «ԼԻՆԿ» ընկերությունը նշված կայքի «արտադրանք» բաժնում ներկայացնում է վերջինիս կողմից առաջարկվող ծրագրերը, որի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ «1C-ԼԻՆԿ: Աշխատավարձ և անձնակազմի կառավարում» ծրագիրը ոչ թե

ներկայացված է որպես ենթահամակարգ, այլ առանձին պրոդուկտ, ինչպես կայքում նշված մի շարք այլ պրոդուկտներ, հետևաբար Պատվիրատուի նման հիմնավորմամբ ներկայացված առարկությունը բողոքի վերաբերյալ հիմնավոր չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Բի սոֆթ» ՍՊԸ-ի կողմից 01.07.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-07/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել Ընթացակարգը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**